

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՉ ՄՈՏ 20 ՏԱՐԻՎ ԾԵՐԱՅԵԼ Է

Գիտության պետական կոմիտեն աշխանը կառավարություն կներկայացնի ոլորտի զարգացման ռազմավարությունը՝ 10 տարվա կտրվածքով: Բավականին հավակնոտ ծրագրում ընդգրկված են գիտության ոլորտի թիրախային խնդիրներն ու դրանց ուղղությամբ կոմիտեի պատկերացրած լուծումները: Ռազմավարության մանրամասների եւ առհասարակ գիտության ոլորտի իրավիճակի մասին է NEWS.am-ի գրույցը Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի հետ:

Պարոն Հարությունյան, Ձեր մշակած ռազմավարության մասին մի փոքր կմանրամասնե՞ք:

Սա շատ կարելու փաստաթուղթ է: Հայաստանի գիտության զարգացման 10 տարվա ռազմավարությունն է: Գիտության ասպարեզում խնդիրները շատ-շատ են: Համակարգային փոփոխություններ են ենթադրվում մոտակա 10 տարիների ընթացքում: Այսօրվա մեր համակարգը հորհրդային Միությունից ժառանգած համակարգն է՝ գիտություն իրականացնող երեք ոլորտները՝ ազգային ակադեմիան, ճյուղային գիտությունը (տարբեր նախարարություններ ունեն ինստիտուտներ) եւ բուհական գիտությունը: Այս հիմնարկների գիտությունը հորհրդային Միությունից տրանսֆորմացված գործառույթներն են, որոնք ժառանգել ենք: Անկախության պարագայում իրավիճակը փոխվեց: Այն ժամանակ հզոր պետության մաս էինք կազմում եւ համապատասխանաբար ընդունում այն խաղի կանոնները, որոնք այդ պետությանն էր սազական, եւ Հայաստանը իր ուրույն դերակատարումն ուներ ու վատ չէր աշխատում: Մեր հանրապետության գիտական վարկանիշը բավականին բարձր էր: Ժամանակը փոխվեց, անկախ պետություն՝ սահմանափակ մարդկային ռեսուրսներով, սահմանափակ գիտակրթական տարածքով: Խնդիրներն էլ փոխվեցին, հետեւաբար մեր պետության համար անհրաժեշտ էր ունենալ գիտության զարգացման նոր ռազմավարություն:

Ո՞ր խնդիրներն են հատկապես շեշտադրված ծրագրում:

Մեկը նյութատեխնիկական բազայի արդիականացումն է: Վերջին 30 տարվա ընթացքում գիտական սարքավորումները չեն թարմացվել: Իհարկե, կան առանձին լաբորատորիաներ, որ իրենց գրանտային ծրագրերով կարողացել են սարքեր ձեռք բերել: Կան 80 հետազոտական հիմնարկներ, որոնց մի մասը իրենց գիտական ծրագրերով կրկնում են իրար: Այդ քանակի հիմնարկներ պետք չեն, ենթադրվում է, որ ապագայում պիտի միավորվեն, այսինքն՝ ենթակառուցվածքների օպտիմիզացիայի հստակեցում պետք է լինի: Մյուսը գիտական տեղեկատվական ցանցի ստեղծումն է: Պետք է կարողանանք Հայաստանը ինտեգրել եվրոպական կառույցներում: Հաջորդը գիտության ու կրթության տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի դիսամիկ աճի ապահովումն է: Սա կապված է խելացի երիտասարդների հոսքի հետ: Հետեւաբար պետք է ծրագիր մշակենք, որ երիտասարդները գայթակղվեն եւ մնան Հայաստանում: Երիտասարդական հատուկ գրանտային ծրագրեր ենք իրականացնում: Այս ամսվա վերջին մրցույթ կհայտարարենք 30 տարեկան փորձառու գիտնական երիտասարդներին դրամաշնորհներ կտրամադրենք: Ապագայում ենթադրվում է երիտասարդներին հավելյալ աշխատավարձ տրամադրել: Գիտական կադրերի վերարտադրությունը մեզ մոտ հատուկ ձեւով է կատարվում: Այն կլինի նպատակային, այսինքն՝ գիտությամբ կզբաղվեն նրանք, ովքեր պիտի զբաղվեն եւ ոչ թե նրանք, ովքեր խուսափում են

բանակից: Կարելոր կետերից է նաեւ կրթության գիտության տեխնոլոգիաների եւ ինովացիայի (նորարարության) ներդաշնակ ձեւավորումը:

Անկախացումից հետո չի մշակվել որեւէ ծրագիր:

Չէ, անկախացումից հետո չի ներկայացվել ռազմավարություն՝ օբեկտիվ պատճառներով: Նախ Խորհրդային Միության փլուզումից առաջ տեղի ունեցավ այլանդակ երկրաշարժ, որը մեր տնտեսությունը ամբողջությամբ ավերեց: Հայաստանը երկրաշարժից հետո անկախ պետություն դարձավ, այսինքն՝ մենք մենակ մնացինք մեր բոլոր խնդիրների հետ: Այնուհետեւ դարաբաղյան պատերազմը. մեր ամբողջ ռեսուրսները ներդրեցինք այդ պատերազմին: Մի խոսքով, այս ամենի հետեւանքով գիտությունը մղվեց 7-րդական պլան: Այս շրջանում եթե նույնիսկ մշակվեր, անիմաստ էր: 2000 թվականին Հայաստանի գիտության բյուջեն եղել է 4 միլիոն դոլար, եթե համեմատենք խորհրդային ժամանակների հետ, ապա, թվերը հստակ չեն հիշում, բայց մոտ 4 հարյուրից 5 հարյուր միլիոն դոլար էր: 2000 թվականից հետո տնտեսությունը, սկսեց զարգացում ապրել, բնականաբար, պետության ղեկավարները հասկացան, որ մենք ունենք մի հզոր ոլորտ, որ ժամանակին մեզ պատիվ է բերել, տնտեսությունը մեծ օգուտ, հարկավոր է այն առաջ մղել: Սկսվեցին գիտության ասպարեզում բովանդակային ու կառուցվածքային լուրջ փոփոխություններ:

Իսկ ներկա դրությամբ ոլորտն ի՞նչ վիճակում է:

Մինչեւ կոմիտեի նախագահ դառնալը ես ավելի վատ պատկերացում ունեի ոլորտի վիճակի մասին: Իրականում Հայաստանում այս տարիների ընթացքում լուրջ պոտենցիալ պահպանվել է: Կրաստանի, Ադրբեջանի ու շատ երկրների հետ համեմատած մենք գիտակրթական լուրջ պոտենցիալ ունենք: Մոտ 7500 գիտնական կա Հայաստանում, միջազգային հեղիանակավոր ամսագրերում շատ հոդվածներ ունենք տպագրված, մոտ 6500 աշխատանքեր:

Տարիքային բաշխումն ինչպիսի՞ն է մեզ մոտ, օրինակ՝ այդ աշխատանքերի հեղինակները հիմնականում ի՞նչ տարիքի գիտնականներ են:

Խորհրդային Միության գիտնականներն էլ, երիտասարդներն էլ տպագրվում են: Ցավոք, տարիքային բաշխումը, որ նայում ենք՝ 35-40-ի միջակայքը, բավականին ցածր է մեզ մոտ, դա այն տարիքն է, երբ գիտնականը առավել ակտիվ է աշխատում: Ցավոք, տնտեսական ծանր պայմանների պատճառով այդ տարիքային միջակայքը նվազեց, շատերը գնացին արտասահման: Բայց, այնուամենայնիվ, դեռ ունենք երիտասարդներ, որ մեզ մոտ աշխատում են: Գիտության ոլորտում աշխատող մարդկանց տարիքը, ցավոք, շատ ծերացել է, թեւեւ գիտական պաշտպանությունները շատ են, բայց գիտության մեջ ընդգրկված գիտնականների տարիքը համարժեք չէ պաշտպանածների թվին: Օրինակ, Հայաստանում գիտությունների թեկնածուների միջին տարիքը մոտ 57 տարեկան է, իսկ դոկտորներինը՝ 62: Գյուղատնտեսության ոլորտում դոկտորների միջին տարիքը՝ 72, սրանք շատ վտանգավոր թվեր են:

Իսկ խորհրդային ժամանակաշրջանի հետ համեմատա՞ծ:

Խորհրդային ժամանակաշրջանում թեկնածուների միջին տարիքը մոտ 27-28 տարեկան էր, տարբեր ժամանակներում տարբեր էր՝ մինչեւ 32, բայց այդ միջակայքը մինչեւ 30 տարեկան թեկնածուների համար բավականին լավ տարիք է, իսկ դոկտորներինը՝ 40-45 էր: Մոտ 20 տարով գիտությունը մեզ մոտ ծերացել է, դա շատ վատ է:

Գիտնականների միջին աշխատավարձը որքա՞ն է կազմում:

Գիտեք, կոնկրետ աշխատավարձ չկա, որ ասենք գիտնականը ստանում է 50 հազար դրամ աշխատավարձ, հիմա ընդունված է ասել, որ գիտության ոլորտում

աշխատավարձը 50 հազար է: Դա այնքան էլ ճիշտ չէ: Նախեւառաջ մենք ունենք բազմաթիվ գիտական ծրագրեր՝ բազային, գրանտային, եւ նույն գիտականը կարող է այնտեղից էլ, այնտեղից էլ ստանալ: Խորհրդային Միությունից ժառանգված գիտակաները 1200 են: Նրանց ազգանունները 94-ից մինչեւ հիմա ես տեսնում եմ բոլոր ծրագրերում: Նրանց միջին աշխատավարձը այսօր մոտավորապես 1000 դոլար է: Լացելու սովորությունը որոշ մարդկանց մոտ կա: Ճիշտ է, պետության կողմից տրված աշխատավարձը որ բաժանես գիտականների վրա, կլինի 50-55 հազար դրամ, բայց գիտությունը միայն պետական միջոցներով չի զարգանում: Եթե մեր ռազմավարության մեջ ընդգրկված կրթության գիտության ինովացիոն տեխնոլոգիաների համակարգի ստեղծումը իրականանա, պետական միջոցների ծախսումը գիտության մեջ 50 տոկոս կդառնա: Այսօր մեր գիտությունը 100 տոկոսով նստած է պետության վրա, այդպես չափտի լինի: Ես բազմաթիվ դեպքեր կարող եմ բերել, երբ գրանտային ծրագրերում ընդգրկված երիտասարդին տալիս ես 3-4 հարյուր դոլար աշխատավարձ, նա հրաժարվում է երեք հազար դոլարով դրսում աշխատելուց:

Այսինքն՝ երիտասարդ գիտականին գոհացնում է 400 դոլար աշխատավարձը:

Ես բազմաթիվ դեպքեր կարող եմ բերել: Ես, օրինակ, աշխատել եմ Ֆլորենցիայի համալսարանում, մեծ աշխատավարձով, հետո ինձ հրավիրել են, ես եկել եմ համալսարան 30 դոլար աշխատավարձով: Ես մտածել եմ, որ ես պետության զավակ եմ ու իմ առաքելությունը այստեղ պիտի իրականացնեմ: 2000-2003 թվականներին մեր ամբիոնը 1 միլիոն 200 հազար դոլարի գրանտային ծրագրեր շահեց եւ ստեղծեցինք հոյակապ լաբորատորիա: Իմ ասպիրանտները այն ժամանակ 600 դոլար էին ստանում:

Իսկ բիզնեսմենները ներդրումներ անում են գիտության ոլորտում:

Այս խնդիրն էլ է ընդգրկված ծրագրում: Մոտակա 10 տարիների ընթացքում մենք պետք է ստեղծենք համակարգ, որը լինի այնպիսին, որ բիզնեսմենի համար պատվեր տալը լինի շահեկան: Իսկ այսօր բիզնեսմենը, որ տեսնում է ինստիտուտներում սարքավորումները հնացած են, շենքերը քանդված, նա գիտականին չի վստահում: Ինչքան էլ խելոք մարդ լինի: Եթե կարողանանք լուրջ սարքավորումներ ձեռք բերել, ապա գիտականի տված արտադրանքին կսկսեն հավատալ: Բիզնեսմենը կհասկանա, որ ներմուծած տեխնոլոգիաներով իր բիզնեսը զարգացնելը ավելի քիչ շահեկան է, քան թե տեխնոլոգիայի պատվեր տալը մեր գիտականներին: Նույնիսկ Միացյալ Նահանգներում, որ հզորագույն պետություն է, սկսել են հենվել սեփական գիտականի վրա, քան թե տեխնոլոգիաներ գնելու, քանի որ սեփական գիտականները ավելի էժան են: Ճգնաժամ ունեցող երկրները ավելի ուշադրություն են դարձնում գիտության վրա: Ռուսներն էլ են դա հասկացել: Իսկ Չայաստանը փոքր երկիր է, մեր բյուջեն փոքր է, մոտ 8,3 մլրդ դրամ է, 30 միլիոն դոլար:

Պարոն Չարությունյան միայն հնացած սարքավորումներով է պայմանավորված բիզնեսմենների անտարբերությունը գիտության նկատմամբ: Գուցե նրանց արժեքային համակարգը թույլ չի տալիս հետաքրքրվել այս ոլորտի խնդիրներով, չէ՞ որ բոլորիս է հայտնի, թե ովքեր են հայաստանյան բիզնեսի կարկառուն ներկայացուցիչները:

Ճիշտ եք ասում, համաձայն եմ Ձեզ հետ: Եթե նայենք 18-րդ դարի նոր ստեղծված բուրժուազիային, որի մեջ սկսեց զարգանալ տեխնիկական բուրժուազիան, ապա կտեսնենք, որ այն ժամանակվա բիզնեսմեններն էլ մարդիկ էին, որոնք արագ կողմնորոշվեցին ու բիզնեսմեն դարձան: Ես այսօր շատ ծանոթ ընկեր բիզնեսմեններ ունեմ, որոնք ժամանակին շարքային հասարակ գիտական են եղել...

Գիտնակա՞ն...

Այո, մեր բիզնեսմենների մեջ բավականին խելոք մարդիկ կան: Կան նաեւ բիզնեսմեններ, որոնք առանձնապես կրթություն չեն ստացել եւ դեպքերի բերումով

դարձել փողատեր: Նույնիսկ այս դեպքում, եթե շփվեք, կտեսնեք, որ կրթության հանդեպ խորը հարգանք ունեն: Ուզում եմ, որ իրենց երեխաները շատ լավ կրթություն ստանան... Իրենք շատ լավ հասկանում են, որ ժամանակի ընթացքում, այս վայրենի կապիտալիզմից հետո, երբ հստակ խաղի կանոններ սկսեն աշխատել, մոնոպոլ բիզնեսը կվերանա, փողը պահելու համար պետք է գրագետ սերունդ զարգացնես: Եթե դու չարեցիր, կկորցնես: Եւ դա իրենք շատ լավ հասկանում են ու իրենց ընտանիքներում այդ մտայնությունը կա: Մեզ մոտ նոր ձեւավորվող բուրժուազիա է: Մեզ մոտ ռեալ կապիտալ սկսեցին ձեռք բերել 90-ական թվականներին, ժամանակը կարճ էր՝ գրագետ դառնալու համար: Բիզնեսի ասպարեզում պետք է ունենալ հոյակապ մենեջմենթ: Այս բաները նոր են սկսել հասկանալ: Եւ բացի այդ, մեր բիզնեսմենտները ուզում են արագ շահույթ ստանալ, դրա համար գերադասում են դրսից տեխնոլոգիաներ գնել, բերել եւ սկսել միանգամից փող աշխատել, ոչ թե մի հինգ տարի ժամանակ ծախսեն եւ այդ տեխնոլոգիան ստանան Յայաստանում ավելի էժան: Եւ այդ բրենդը կլինի իրենց ձեռքում: Այդ տեխնոլոգիան կարող են վաճառել ու ստանալ հարյուրապատիկ շահույթ: Սա մեզ մոտ դեռ հասունացած չէ, իսկ դրա համար պետությունը պետք է օգնի: Պետք է բիզնեսմենին հասկացնի, որ՝ գիտես լավ կլինի սա անես, քեզ համար սա է օգտակար:

Պարոն Յարությունյան, չէ՞ որ մեր երկրում բիզնեսի կարկառուն ներկայացուցիչները պետության դեկավարներն են, արագ շահույթն էլ իրենք են հետապնդում, էլ ո՞վ ում պիտք է բան բացատրի:

Եթե մարդկությանը վերաբերվող գլոբալ խնդիր ես լուծում, ապա լուծման եղանակները շատ նման են իրար: Այսինքն՝ Յայաստանը ժամանակի ընթացքում համապատասխան ճանապարհ անցնելուց հետո կգա, այն պետությունների գաղափարին կհանգի, որոնք այսօր դարձել են զարգացած երկրներ: Մենք յուրահատուկ ազգ չենք, որ ասենք՝ ամեն ինչ վերացավ: Մենք ճանապարհ ունենք անցնելու, այնպես, ինչպես բոլոր երկրները:

Գիտության ո՞ր ճյուղն է մեզ մոտ շատ զարգացած:

Ավանդական ճյուղեր կան, որ խորհրդային ժամանակներում զարգացած են եղել: Մինչեւ հիմա էլ շարունակվում է ֆիզիկան: Ցավոք, քիմիան վատ վիճակում է, բայց այն ժամանակ մեծ քիմիան էր զարգացած Յայաստանում: Մեծ քիմիան Խորհրդային Միությունում զարգացավ, որովհետեւ հումքը հիմնականում դրսից էին բերում եւ Յայաստանը դարձավ քիմիայի երկիր: Եթե բացվեն, ես վստահ եմ, որ մեծ քիմիան մեզ մոտ նորից կզարգանա: Ավանդաբար միկրոէլեկտրոնիկան է զարգացած, ֆիզիկայի մի շարք ոլորտներ՝ տեսական, միջուկային: Մենք ատոմային երկիր ենք, ատոմակայան ունենք: Կենսաբանությունն էլ շատ լավ վիճակում է: Եթե համեմատենք խորհրդային ժամանակների հետ, բավարար չէ, բայց այս ոլորտներում դեռ ունենք լուրջ կադրեր: Գիտության համար շատ կարելու է դպրոցի պահպանումը: Մի շարք դպրոցներ մեզ մոտ վերացել են անկախության տարիներին: Օրինակ, աստղագիտության ոլորտը հիմա ծանր վիճակում է: Եթե ուշադիր լինենք, կարող ենք այս ոլորտը նորից վերականգնել: Բայց ոլորտներ կան, որ անվերադարձ կորցրել ենք:

Իսկ Յայաստանը գիտության ներկայիս մակարդակով ո՞ր երկրների հետ կարող է համեմատվել:

Նախկին սոցիալիստական երկրների հետ որ համեմատվենք, մեր մակարդակը էապես մի գուցե կարող է զիջել Ռուսաստանին, իսկ մնացած երկրների հետ համեմատ՝ նույնիսկ բարձր մակարդակ ունենք: Գիտնականների մակարդակով մենք շատ լավ ենք: Մենք ֆինանսական եւ կազմակերպչական խնդիրներ ունենք լուծելու: Ռազմավարությունը նաեւ կազմակերպչական մոտեցումների ու խաղի կանոնների ստեղծմանն է ուղղված:

Իսկ հայագիտության ոլորտը ի՞նչ վիճակում է:

Ակադեմիան այս հարցում կարելու դերակատարություն ունեցել է: Պետք է հաշվի առնենք, որ այս ոլորտը խորհրդային ժամանակաշրջանում զարգացնելու նպաստավոր պայմաններ չկային: Եւ խորհրդային գաղափարայնացված պետությունը խանգարում էր: Ազգերի հավասարության կեղծ սկզբունքը թույլ չէր տալիս մեր պատմամշակութային ժառանգության մասին բարձրաձայն խոսել, որովհետեւ դա կարող էր չունչիներին խանգարել: Եթե նույնիսկ շատ էլ ցանկանայինք, դժվար կլիներ, սակայն մենք ունեցել ենք հզոր հայագետներ: Այսօր իրավիճակը փոխվել է, իսկ որպեսզի այս ոլորտում լուրջ առաջընթաց գրանցենք, մեր ռազմավարության մեջ էլ գրել ենք: Այս ոլորտի վերաբերյալ առանձին ծրագիր պիտի գրենք եւ ներկայացնենք կառավարությանը: Ես հույս ունեմ, որ եթե այս ռազմավարությունը իրականացվի, մենք կունենանք լուրջ գիտություն, կվերադառնանք 80-ական թվականների մեր մակարդակին: Աշխատասեր ժողովուրդ ենք, ճկուն ենք, այս բոլոր հատկանիշներն ու պետության մոտեցումներն էլ որ հաշվի առնենք, ապա ես հույս ունեմ, որ 2020-ին կունենանք լուրջ ավանդույթներով գիտություն:

Երիտասարդների հետաքրքրությունը գիտության նկատմամբ ի՞նչ մակարդակում է:

Մենք ունենք փայլուն երիտասարդներ: Նույնիսկ մեր կուրսը, որ վերջին 15 տարիների ընթացքում համարվում էր հզոր կուրս, մենք գիշում ենք: Ճիշտ է արագ էինք կողմնորոշվում՝ այս կամ այն խնդիրը լուծելիս, բայց կաղապարված էինք: Գաղափարայնացված էր գիտությունը, մեզ շատ խանգարում էր: Հիմա ինտերնետի, ինֆորմացիայի դարաշրջան է: Հիմա էլ ունենք երիտասարդներ, որոնք հաճույքով գիտությամբ կզբաղվեին, ուղղակի նրանց մեծ մասը թողնում, գնում է: Խորհրդային տարիներին երկաթե վարագույր էր եւ գնալ-գալը շատ դժվար էր: Ես արտասահման գնացի 86 թվականին՝ մեծ դժվարությամբ: Քանի որ գեկուցման տեքստը Գլավլիտով չէի անցկացրել, սահմանից ինձ չթողեցին անցնել: Շատ դժվար էր, հոսքի մասին խոսելն էլ ահմաստ էր: Իսկ հիմա ազատ ես: Ցանկացած մարդ, որ ունի շնորհք եւ ունակություններ, կարող է ցանկացած երկրում աշխատել: Ընդհանրապես, գիտնականների ազատ տեղաշարժը կարելու գործոն է: Ամբողջ աշխարհում գիտնականները ազատ գնում են, տարբեր երկներում աշխատում ու վերադառնում են: Պարզապես մեզ մոտ վատն այն է, որ գնում են ու չեն վերադառնում: Եթե գիտնականը ազատ չտեղաշարժվի, լուրջ հաջողություններ չի ունենա, ուղղակի պետք է ապագայում ստեղծենք պայմաններ, որպեսզի երիտասարդ գիտնականը ինչ-որ ժամանակ արտասահմանում աշխատելուց հետո վերադառնա Հայաստան: Այս խնդիրն մեր ռազմավարության ծրագրում լուրջ ուշադրություն է դարձվում:

Ուղեղների արտահոսքի աճի միտում կա՞:

Հիմա բավականին նվազել է, իսկ 90-ականներին շղթայական ռեակցիայի նման մի բան էր. բոլորը թողեցին, հեռացան: Հիմա էլ կա, բայց ծավալը այդքան շատ չէ:

Պայմանավորված ձեր նշած 3-4 հարյուր դոլար աշխատավարձով:

Չէ, չէ: Նախեւառաջ գիտության մեջ մտնող մարդիկ են պակասել:

Պարոն Հարությունյան, մեր փոքրիկ բյուջեով ինչպե՞ս է իրականացվելու Գիտության կոմիտեի բավականին հավակնոտ ծրագիրը:

Բանն այն է, որ փողերի օգտագործման օպտիմալ ճանապարհ պետք է գտնվել: Գումարների մի մասը փոշիացնում են, նույնիսկ չեն գումարները: Այսօրվա 8 միլիարդը, նորմալ ձեւով չեն ծախսում: Այսինքն՝ պետք է նպատակային ծրագրերի վրա ծախսեն, պետությունը պատվեր պետք է տա ու դրանց վրա պետք է ծախսել: Ես բան չունեմ ասելու, հիմնարար գիտության համար գումար պետք է ներդնես, բայց

գումարների բավականին լուրջ մասը պետք է տրամադրել պետական ծրագրերի համար, ինչը չի արվել: 4-5 միլիարդ դրամը բավականին լուրջ գումար է, եթե նպատակային ծախսես, հաստատ լուրջ արդյունք տալու է: Սա շատ երկրների փորձն է: Այսինքն՝ այնպես չէ, որ ինստիտուտը կա, ինստիտուտին պիտի գումար տաս: Ոչ թե պետք է ըստ ինստիտուտի անդամների գլխաքանակի բաշխես փողը, այլ ըստ գիտական խնդիրների: Եթե մենք կարողանանք ֆինանսավորել այն ծրագրերը, որոնք նպաստում են տնտեսության այս կամ այն ճյուղի զարգացմանը, ապա այդ ժամանակ այն կլինի արդյունավետ:

Չրուցեց Գայանե Գրիգորյանը